

նը. պատուիրելով սակայն առժամապէս հանդարտ մնալ մինչեւ ժամը հասնի»:

Եւ յետոյ, Պլուտարքոս անցողակի որպէս աննշան փաստ աւելացնում է՝ «Տիգրանի տիրապետութիւնը անտանելի էր յոյներին»^{*)}: Եւ անշուշտ Ապպիուսի առաքելութեան իրական ու գաղանի նպատակը հէնց այս էր՝ դաւեր նիւթել Տիգրանի դէմ: Բոլոր գաղտնիքը Տիգրանի պատմութեան այստեղ է: Իր տիրապետութեան տակ զտնուող յոյն բազմաթիւ քաղաքներն արդէն իսկ փորել էին հայ կայսրութեան հիմքերը դեռ Լուկուլլոսի գալուց առաջ: Հռոմէական բանակները երեւալը սոսկ ազդանշան եղաւ վերջին հարուածը տալու նորակազմ պետութեան: Կայսրութեան նոր մայրաքաղաքը՝ Տիգրանակերտ, որ Տիգրան ափ յափոյ հիմնեց իր գայստնի ոյժով իր պետութեան կեդրոնը համապատասխան տեղ դնելու համար, ազատ չէր այս հակահայ քաղաքականութեան արտաքին: Յոյն բնակիչները սպասում էին հռոմէական զորքերի հասնելուն՝ ապստամբելու համար:

Հայաստանը իր այս աշխարհակալութեան ճամբին՝ տակաւին ոչ ռազմական, ոչ պետական եւ ոչ մանաւանդ քաղաքացիական անանդութիւններ ունէր, որոնցով այնպէս հզոր էր Հռոմը: Ամէն ինչ նոր էր ու խախտու, եւ պէտք ունէր ժամանակի՝ ամբապնդուելու համար:

Եւ այդ ժամանակը ճակատագրորէն պահասեց նրան: Հայաստանի եւ Հռոմի այս բախումը նման է մի ուժեղ, սպառազինուած տրդամարդի եւ մի խոստումնալից, հարուստ ասպազայով, արիասիրտ, կայտառ պատանու պայքարին, որի ելքը դժուար չէր նախատեսել:

Մեր համակ ազգային գոյութեան ու մեր ցեղական բախտի մեծագոյն թշուառութիւնն եղաւ Հայաստանի կանխաժամ բախումը Հռոմի անպարտելի զորութեան հետ: Մեր յետագայ ողջ պատմութիւնը այդ բախումի աղէտալի հետեւանքները կրեց եւ կրում է մինչեւ այսօր:

^{*)} Պլուտարքոս՝ հատոր Բ. էջ 525:

Գ.

ՄԵՆՆ ՏԻԳՐԱՆԻ «ՈՁ»Ը

Պատմութիւնն չեմ գրում, այլ պատմադեղարուեստական նշմարներ: Բայց ինչպէ՞ս չլիշատակեմ Տիգրան Մեծի եւ Հռոմի առաջին պատգամաւոր՝ Կլաւտիուս Ապպիուսի բախտորոշ հանդիպումը Անտիոքում, որ այդ ժամանակ հայ Արքայից-Արքայի գերելխանութեան տակ էր: Անշուշտ հռոմայեցիները անծանօթ չէին Տիգրանին. սակայն, Անտիոքի տեսակցութիւնը կատարուած էր այնպիսի արտասովոր պարագաներում, որ կարելի էր այն անուանել իրապէս դրամատիկական:

Միհրդատ արդէն պարտուած էր Լուկուլլոսից եւ մաղապուրժ ու փախտական նետուել էր Հայաստանի սահմանները ապաստան եւ հովանի հայցելով իր փեսայից՝ հայոց մեծագոր արքայից: Տիգրան դիտէր, թէ Հռոմի պատգամաւորը եկած էր յանուն Լուկուլլոսի պահանջելու որ Միհրդատը Հռոմին յանձնի:

Հայ միապետը ընդունեց Ապպիուսին իր արքայական բոլոր շուքով եւ փայլով. նա նրատաճ էր ոսկեհուն գահոյի վրայ՝ շրջապատուած իր զորավարներով, բարձրաստիճան պալատականներով ու խորհրդականներով, գայիստներ ձեռքին ու մարդարտաշար թաղը՝ վլխին:

Տիգրան արդէն վաթսուներ վաղուց անց՝ տարեց մարդ էր: Տարիները սակայն ոչ ծոել էին նրա թիկունքը, ոչ իր աննական կորովն ու զօրութիւնը եւ ոչ իր արքայական կեցուածքը: Նա մի հուժկու տղամարդ էր. հռոմայեցիների պէս սափրած ու ջղուտ՝ նա իր տարիքից շատ աւելի երիտասարդ էր թւում: Նրա յուժեղ պրոֆիլը (կիսադէմ), ուր իշխում էր վայելչաձեւ քիթը եւ սեղմ ու յամառ ծնօտը, իր բարձրադիր ու հպարտ ճակատը, իմաստուն ու խորունկ աչքերը եւ իր ամպրոպային ու խոհուն հայեացքը՝ համակ վայելչութիւն էր ու զօրութիւն եւ անբռնազատ, ինքնարուխ վեհափառութիւն: Գէթ այսպէս ենք տեսնում նրան իր թողած դրամների վրայ, որոնք լաւագոյնն են համարուած դրամապիտութեան պատմութեան մէջ:

Հայոց արքայի առջեւը նստած էր Ապպիուս Կլաւտիուս՝ երիտասարդ հռոմայեցի,